

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

ք. Երևան

01.11.2016թ.

Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հասարակական խորհրդի անդամներ

Ա. Մինասյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար /խորհրդի նախագահ/
Խ. Հակոբյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ
Վ. Հակոբյան	«Դեմետրա-էկո» բնապահպանական գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ,
Լ. Թասալյան	«Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն,
Ս. Ադամյան	«Էկոլոգիական հասարակական միություն » ՀԿ
Ա. Համբարձումյան	«Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ նախագահ
Ա. Համբարձումյան	«Հասարակական ձայն»/ Civil Voice/ ՀԿ
Ա. Իսկոյան	«Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Գ. Նանյան	«Քայլ» ՀԿ
Մ. Ասատրյան	«Հակոբյան բնապահպանական կենտրոն»
Է. Գրիգորյան	«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» ՀԿ
Ա. Վարդանյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Հ. Սանասարյան	«Հայաստանի կանաչների միություն» ՀԿ
Գ. Գաբրիելյան	«Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» ՀԿ

Վ. Գալստյան «Ջերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ
Հ. Տիգրանյան «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»

ՀՀ բնապահպանության նախարարություն

Խ. Խաչատրյան

ՀՀ բնապահպանության նախարարության

աշխատակազմի իրավաբանական վարչության պետ

Վ. Սահակյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Դոնոյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ

Ա. Մինասյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ

Օրակարգում

Հարց 1.

Խորհրդի արտահերթ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Ջեկուցող՝ Ա. Վարդանյան Հասարակական խորհրդի անդամ

Հարց.2

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին «Հասարակական ծայն» ՀԿ-ի ներկայացրած նախագծի քննարկում:

Ջեկուցող՝ Ա. Համբարձումյան «Հասարակական ծայն» ՀԿ

Հարց.3

Գեոթիմ ՓԲԸ-ին Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի համար տրված բնապահպանական փորձաքննության եզրակացության վերաբերյալ քննարկումներ:

Մտքերի փոխանակում

Հարց.4

<<Գործընկերություն հանուն բաց հասարակության>> նախաձեռնության կողմից 2017-2019թթ. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 18-րդ <<Առողջ և ապահով

միջավայրում ապրելու իրավունք>> գլխի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկում:

Ջեկուցող՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Խ. Խաչատրյան

ՀՀ բնապահպանության նախարար, Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը ողջունելով ներկաներին՝ հաստատման դրեց Խորհրդի օրակարգը:

Հարց 1.

Խորհրդի արտահերթ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Ելույթով հանդես եկավ Խորհրդի անդամ Ա. Վարդանյանը

Թվարկեց Խորհրդի նախորդ նիստի ընթացքում հնչած առաջարկությունների և Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարման ուղղությամբ կատարված քայլերը: Ներկայացրեց, որ բոլոր որոշումները կատարված են, կամ դրանց կատարման մեկնարկը տրված է, իսկ հնչած առաջարկությունների ուղղությամբ արդեն աշխատանքները կատարվում են: Տեղեկացվեց նաև, որ ՀՀ կառավարության ծրագրի բնապահպանական բաժնի վերաբերյալ հասարակական կազմակերպությունների ներկայացրած առաջարկների մի մասն ընդգրկվել են ծրագրում, մյուսների մասով տարվում են գործնական քայլեր՝ նախարարության ընթացիկ աշխատանքների շրջանակներում:

Դիտողությամբ հանդես եկավ Գ. Նանյանը

Հայտնեց, որ «Դեմետրա Էկո» հասարակական կազմակերպության՝ նախորդ նիստում բարձրացված և հետագայում Նախարարին ներկայացված գրավոր դիմումը պատասխան չէր ակնկալում, այլ ի գիտություն էր ներկայացվել, սակայն ՀՀ ԲՆ-ից ստացվել է գրավոր պատասխան:

Պարզաբանումով հանդես եկավ Ա. Մինասյանը

Հանձնարարեց քննել «Դեմետրա Էկո» հասարակական կազմակերպության գրության կատարման ընթացքը:

Հարց.2

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում /Այսուհետ՝ Օրենք/ փոփոխություններ կատարելու մասին «Հասարակական ձայն» ՀԿ-ի ներկայացրած նախագծի քննարկում:

Ելույթով հանդես եկավ «Հասարակական ձայն» ՀԿ փորձագետ Ա. Համբարձումյանը

Առաջարկեց օրենքում կատարել փոփոխություններ, որոնք կհստակեցնեն փորձաքննության ենթակայության նորմերը, հիմնադրույթային և նախագծային փոփոխությունները, փորձաքննության եզրակացության կատարման նկատմամբ վերահսկողության լիազորությունները և կկանոնակարգեն առանձին խնդիրներ:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը

Նշեց, որ առաջարկությամբ ներկայացված օրենքի նախագծի մյուս կետերը նույնպես կքննարկվեն և հիմնավորվելու դեպքում կներառվեն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ձևավորված և գործող աշխատանքային խմբի օրակարգում:

Ելույթով հանդես եկավ Վ. Սահակյանը

Շնորհակալություն հայտնեց առաջարկությունների համար: Նշեց, որ օրենքի կիրառման արդյունքում իրոք հայտնաբերվել են բացեր, որոնց շտկման ուղղությամբ տարվում են աշխատանքներ: Առաջարկների մի մասն կընդունվեն, մյուսների ուղղությամբ առանձին կքննարկումներ կկազմակերպվեն:

Ելույթով հանդես եկավ Ա. Համբարձումյանը

Իր ելույթում անընդունելի հարեց Օրենքով սահմանված՝ նախագծային փոփոխությունների փորձաքննության ենթակա լինելու անհրաժեշտության հարցը թողնել Ձեռնարկողի հայեցողությանը:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Դոնոյանը

Նշեց, որ առաջարկությունն ընդունելի է, սակայն կան հարցեր որոնք ընդունելի չեն:

Առաջարկությամբ հանդես եկավ Ն. Վարդանյանը

Քանի որ ինք էլ է մշակել փոփոխությունների փաթեթ, առաջաչկեց իր փաթեթն էլ ուղարկել և ըդնհանուր փաթեթով քննարկում կազմակերպել:

Պարզաբանմամբ հանդես եկավ Խ. Հակոբյանը

Նշեց, որ այս ուղղությամբ ընթանում է երկու զուգահեռ գործընթաց: Առաջինը՝ պրակտիկ աշխատանքի արդյունքում ի հայտ եկած փորձի հիման վրա հիմնված Օրենքի փոփոխությունների պահանջ, և երկրորդը ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի աջակցությամբ Ռազմավարական էկոլոգիական գնահատման մշակման և օրենքում ներդրման պահանջի գործընթաց: Տեղեկացրեց, որ ներկայում մշակվում է առաջարկությունների փաթեթ, խումբը ձևավորված է և առաջարկեց ներկայացնել առաջարկները և մեկ փաթեթով քննարկել:

Առաջարկությամբ հանդես եկավ Ա. Մինասյանը

Առաջարկեց Ա. Համբարձումյանին ընդգրկել աշխատանքային խմբում, և դիտարկել քննարկումների ժամանակ հնչած բոլոր առաջարկները:

Առաջարկությամբ հանդես եկավ Ա. Իսկոյանը

Նշեց, որ օրենքի վերաբերյալ դիտողություն ունի նաև Օրիոսի համապատասխանության կոմիտեն և առաջարկեց, փոփոխություններ կատարելու ժամանակ հաշվի առնել նաև այն:

Առաջարկությամբ հանդես եկավ Ա. Մինասյանը

Առաջարկեց անդրադառնալ բնապահպանական փորձաքննության մեթոդիկային, քանի որ առանց հստակ սահմանված մեթոդիկայի, ցանկացած բնապահպանական փորձաքննական եզրակացություն վիճարկելի և հեշտ խոցելի է դառնում:

Ելույթով հանդես եկավ Է. Գիրիգորյանը

Տեղեկացրեց, որ համաշխարհային բանկի ծրագրով մշակվել է հանքարդյունաբերական գործունեության մեթոդիկայի փաստաթուղթ և ՀՀ կառավարությունն իր արձանագրային որոշմամբ հաստատել է այն:

Պարզաբանմամբ հանդես եկավ Վ. Սահակյանը

Նշեց, որ հիշատակված արձանագրային որոշումը ունի խորհրդատվական բնույթ, ինչից օգտվում են:

Առաջարկով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը

Առաջարկեց Հասարակական խորհրդի նիստի օրակարգային հարց դարձնենք մեթոդաբանության հարցը:

Հարց.3

Գեորգիմ ՓԲԸ-ին Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի համար տրված բնապահպանական փորձաքննության եզրակացության վերաբերյալ քննարկումներ

Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյանը,

Առաջարկեց ձայնը տալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Սահակյանին, որպեսզի ներկայացնի հարցի վերաբերյալ փորձաքննության ամբողջ ընթացքը: Հետագայում անցնել հարցադրումներին: Ըստ խորհրդի նախագահի՝ խնդիրն այն է թե փորձաքննությունն անցկացվե՞լ է օրենքի պահանջներին համապատասխան, թե՛ ոչ, և արդյոք կան հարցադրումներ, որոնց ժամանակին պատասխաններ չեն տրվել:

Ելույթով հանդես եկավ Վ. Սահակյանը

Հայտնեց, որ բնապահպանական փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի տառին համապատասխան և անցկացվել են օրենքով սահմանված հանրային քննարկումներ: Վերջիններիս հասարակական կազմակերպություններից մասնակցել է միայն Civil Voice հասարակական կազմակերպությունը, հանդես է եկել առաջարկությամբ, որը հաշվի է առնվել փորձաքննության ժամանակ: Հանրությունը

մասնակցել է հանրային լուսմներին, տվել է դրական կարծիք, համայնքները դրական կարծիքներ են տվել հողահատկացումների մասով:

Առաջարկով հանդես եկավ Հ. Սանասարյանը

Առաջարկեց հետ կանչել փորձաքննության եզրակացությունը և անցկացնել նոր ավելի հիմնավորված փորձաքննություն, որտեղ հստակ կարտացուլի ներկա վիճակը և հանքշահագործումից հետո առաջացած վիճակը: Մտահոգություն հայտնեց հանքարդյունաբերության ծրագրի հնարավոր բնապահպանական ռիսկերի վերաբերյալ՝ հետաքրքրվելով թե արդյո՞ք բոլոր ռիսկերն են գնահատվել փորձաքննության ժամանակ:

Առաջարկությամբ հանդես եկավ Ն. Վարդանյանը

Հայտնեց, որ փորձաքննության վերաբերյալ դիտողություն ունի: Առաջինը՝ ինչու Ջերմուկ քաղաքը չէր ընդգրկվել ազդակիր համայնքների ցանկում և ինչու այնտեղ չեն անցկացվել հանրային լուսմներ: Ըստ բանախոսի պատասխան տրված չէ, թե հանքարդյունաբերությունն ինչպես կազդի Ջերմուկի հանքային ջրի որակի վրա: Հիշեցրեց, որ հանքային ջրերի շուրջ խորհրդային տարիներից սահմանված են սանիտարական գոտիներ, որի երրորդ գոտում արգելված է տնտեսական գործունեությունը, իսկ Ամուլսարը գտնվում է երրորդ գոտում: Հարց բարձրացրեց, թե ինչքանով է համատեղելի ստեղծվելիք Ջերմուկ ազգային պարկը և Ամուլսարի շահագործումը:

Ելույթով հանդես եկավ Գ. Գաբրիելյանը

Մտահոգություն հայտնեց, որ Ամուլսարի հանքշահագործման տարածքում առկա է ռադիոակտիվ ուրան:

Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը

Նշեց, որ բարձրացված բոլոր հարցերը պետք է դիտարկվեն օրենքների շրջանակում և խնդրեց ցանկացած հնչած պահանջի հիմքում հիշատակվի համապատասխան օրենքի դրույթը: Հակառակ դեպքում պետք է ընդունվի օրենքներով հիմնավորված ՀՀ բնապահպանության նախարարության փորձաքննության եզրակացության մեջ բերված դրույթները:

Ելույթով հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ փորձաքննության բոլոր փուլերում Ջերմուկը դիտարկվել է ազդակիր համայնք: Քանի որ հանքշահագործումն իրականացվում է երկու մարզերի սահմանագծում, ապա նախորդ հանրային քննարկումների ժամանակ ազդակիր են համարվել մարզերը, և հանրային լուսմներ անցկացնելու համար ծանուցվում էին այն համայնքները, որոնց վարչական սահմաններում ծավալվելու էր գործունեությունը և ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանները՝ որպեսզի վերջիններս իրենք տեղեկացնեն իրենց ազդակիր համայնքների հանրությանը: Իսկ 2016 թ-ին Ջերմուկ համայնքին անմիջական են ծանուցել հանրային լուսմների մասին և վերջինիս ներկայացուցիչները մասնակցել են քննարկումներին: Նշվեց, որ Ամուլսարի ստորերկրյա ջրերը չեն հոսում Ջերմուկ, այլ հոսում են կամ արևելք կամ արևմուտք, իսկ Ամուլսարի հանքի ջրերի բաղադրությունը տարբերվում է Ջերմուկի խորքային

ջրերից և որևէ ազդեցություն չի ունենա Ջերմուկի հանքային ջրերի վրա, քանի որ դրանք նաև սնվում են տարբեր աղբյուրներից:

Ելույթով հանդես եկավ Է. Գրիգորյանը

Հայտնեց, որ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար Արմեն Սաղաթեյանը հայտնել էր, որ Ամուլսարի հանքաքահագործումն ազդելու է Սևանա լճի և Ջերմուկի վրա:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ փորձաքննության ողջ ընթացքում Արմեն Սաղաթեյանից որևէ եզրակացություն կամ կարծիք չեն ստացել:

Պարզաբանմամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը

Նշեց, որ պետք է տարանջատել անհատ գիտնականի կարծիքը՝ պետական հաստատության կարծիքից:

Ելույթով հանդես եկավ Է. Գրիգորյանը

Առաջարկեց երրորդ կողմի միջոցով իրականացնել ստորերկրյա ջրերի հետազոտությունը, որպեսզի փարատվի մտահոգությունը:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ փորձաքննության ընթացքում հնչել է նման մտահոգություն և ձեռնարկող ընկերությունը իզոտոպների միջոցով նոր ուսումնասիրություն է անցկացրել, ինչի արդյունքները բացառել են ստորերկրյա ջրերի միախառնումը: Ներկա դրությամբ որևէ հիմք չկա այդ ուսումնասիրությունների արդյունքները հերքելու: Բանախոսն անդրադառնալով Ն. Վարդանյանի մտահոգությանը՝ թե 2014թ-ին ՀՀ առողջապահության նախարարությունից կարծիք չի եղել՝ նշեց, որ 2016 թ. արդեն եղել է նախարարության դրական կարծիքը:

Նշվեց նաև, որ կառավարության որոշմամբ լուծվել է հանքաքահագործման վայրում հայտնաբերված ՀՀ կարմիր գրքում գրանցված Մատնունի ծիրանավոր տեսակի հարցը, այն կտեղափոխվի այլ տարածք:

Ելույթով հանդես եկավ Սիլվա Ադամյանը

Նշեց, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր բուսատեսակի տեղափոխում այլ վայրում բազմացման նպատակով և անհնար է նույնատիպ կենսամիջավայր ապահովել:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ ընկերությունը պարտավորվել է ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակը նույն քանակով և պայմաններում բազմացնել:

Ելույթով հանդես եկավ Ինգա Ջարաֆյանը

Հարց բարձրացրեց հանքավայրի ազդեցության գոտու վերաբերյալ՝ նշելով որ ֆաբրիկայի տեղը երեք անգամ փոխվել է:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Արթուր Մինասյանը

Նշեց, որ գործարանը կառուցվելու է Արփա-Սևան թունելի անմիջական ազդեցության գոտուց դուրս և համապատասխանում է ՀՀ կառավարության 2009թ ընդունված որոշմանը, որով սահմանված էր թունելի ազդեցության գոտին:

Հարցադրումով հանդես եկավ Ա. Մինասյանը

Հետաքրքրվեց նախագծային փոփոխությունների մասին:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ նախկինում նախատեսված 3 ջարդիչ կայանների փոխարեն նախատեսված է կառուցել 2 ջարդիչ կայան, ինչը կթչացնի արտանետումները: Որպեսզի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը փոքրացվի, աշխատակիցների համար տեղում ավան չի կառուցվի, այլ աշխատակիցները կբնակվեն հարակից համայնքների հյուրատներում: Նշվեց, որ նոր տեխնոլոգիաների ներմուծման շնորհիվ 50 տոկոսով կրճատվել է ցիանիդի օգտագործումը:

Առաջարկով հանդես եկավ Խ. Հակոբյանը

Նշեց, թե արդյոք հնարավոր չէ դիտարկել տեխնոլոգիաների խնդիրը և ստանալ ավելի մեծ տոկոսի դրական տեղաշարժ: Առաջարկեց ավելացնել տեխնոլոգիական ուսումնասիրությունները:

Առաջարկով հանդես եկավ Է. Գրիգորյանը

Առաջարկեց օրենքի փոփոխության փաթեթում ներառել լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառման դրույթը:

Առաջարկով հանդես եկավ Հ. Սանասարյանը

Առաջարկեց դիտարկել 420 մլն տոննա հանքաքարի մշակման հետևանքները:

Ելույթով հանդես եկավ Է. Գրիգորյանը

Նշեց, որ ձեռնարկողի կողմից ներկայացված նախագծի դրույթները և ուսումնասիրության արդյունքները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը ստուգելու հնարավորություն չունի:

Պարզաբանմամբ հանդես եկավ փորձագետ Ա. Մինասյանը

Նշեց, որ ձեռնարկողը պատասխանատվություն է կրում նախագծի դրույթների կատարման և ուսումնասիրությունների արդյունքների համար:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը

Նշեց, որ զրուցել է փորձագետների և մասնագետների հետ և բոլորը պնդում են, որ Ամուլսարի ծրագիրը մինչ օրս Հայաստանում անցկացված ամենախորքային և մասշտաբային քննարկում անցածն է: Ինչպես նաև ամենաուսումնասիրվածն է: Նկատեց, որ «Լիդիան Արմենիա» ընկերությունը միջազգային ֆոնդային բորսայում գրանցված կազմակերպություն է և ցանկացած ոչ նպաստավոր տեղեկատվություն ուղիղ ազդեցություն ունի այդ ընկերության արժեթղթերի վրա և բնականաբար օբյեկտիվորեն անվնաս գործունեության շահագրգիռ կողմն այդ ընկերությունն է:

Մյուս կողմից էլ օրենսդրական դաշտը կատարելագործելու խնդիր է առաջանում: Նախարարությունն առաջնորդվել և առաջնորդվում է օրենքով, եթե հակառակ պնդումներն իրավական հիմքեր ունեն, խնդրեց ներկայացնել: Հետևաբար խնդրեց Օրենքի 21-րդ հոդվածում նշված հիմքերից մեկը բերել, որով հնարավոր կլիներ ուժը կորցրած ճանաչել փորձաքննության դրական եզրակացությունը:

Պատասխանով հանդես եկավ Ն. Վարդանյանը

Նշեց, որ կներկայացնի իրավական հիմնավորումներ:

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը

Բնապահպանական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու համար խնդրում եմ նայեք Օրենքի 21 հոդվածը, եթե չկա այդ հոդվածում նշված հիմքերից մեկը, ապա հնարավոր չէ օրենքը շրջանցելով որոշում ընդունել:

Առաջարկով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը

Առաջարկեց օրակարգի չորրորդ հարցը տեղափոխել հաջորդ նիստ և 10 օրյա ժամկետում կազմակերպել խորհրդի հերթական նիստը:

Հանձնարարվեց

1.Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Վարդանյանին

Քննել «Դեմետրա Էկո» հասարակական կազմակերպության գրության պատասխանի ընթացքը:


2.Իրավաբանական վարչության պետ Խ. Խաչատրյանին

Ուսումնասիրել միջազգային կոնվենցիաներով ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակի տեղափոխման կարգավորման դրույթ:

3. Խ. Հակոբյանին

Ընդգրկել Ա. Համբարձումյանին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու համար ձևավորված աշխատանքային խմբում և դիտարկել խորհրդի նիստի մասնակիցների ներկայացրած բոլոր առաջարկները:

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ

 Ա. Մինասյան

Արձանագրեց՝
Ա. Վարդանյանը